սերի լեռներում, նրանց մէջ ու նրանց քով զանգուածներով նստած էր հայ տարրը:

Բայց եւ այնպէս, թաթարների դրութիւնը այդ տեսակէտից մերինի բաղդատութեամբ աւելի լաւ էր: Մի տեսակ միջին տեղն էին բռնում վրացիների եւ հայերի բաղդատութեամբ:

Երկար ժամանակ վրացիները եւ թուրք-թաթարները չէին էլ ուզում ճանաչել հայկական տերրիտորիայի գոյութիւնը Անդրկովկասում: Կապուած ընդհանուր շահերով, վրաց եւ թաթարների ազնուականութիւնը իր մէջ էր ուզում բաժանել հայկական հողերը: Եւ կարելի էլ չէ ասել, թէ նրանց այս օրուայ սերունդները, համայնավար պատմուածն հաղուած թէ ոչ, հրաժարուել են այդ մտքից:

Այսպէս կամ այնպէս, յաջողուեց արթնացող քաղաքական հայ մտքին՝ դէթ որոշ չափով ճանաչել տալ իր իրաւունքները Անդրկովկասում: Վերջին 20-ամեակը վճռական դեր ունեցաւ այդ տեսակէտից:

Սկզբում զեմստվո-ի կամ գաւառական ինքնավարութեան պահանջի տակ, յետոյ ազգային անկախ հանրապետութեան հռչակումով՝ արբաղործուեց այդ իրաւունքը, թէեւ մշտապէս վտանգի տակ, թէեւ միշտ էլ սկզբից սկըսած, զրկուած վիճակում, անվերջ յարձակումների ենթակայ:

«Հայկական Շրջանը» 1828ից մինչեւ 1840, որ համարւում էր ռուսական Հայաստան, տեսանք որ ունէր (1838-ին) ընդամէնը 18,620 քառակ. վերստ (շուրջ 21 հազար քառակուսի քիլ.) տարածութիւն, 165 հազար բնակչութեամբ. վերջինիս էլ միայն կէսը հայ:

Այնուհետեւ, երկար տասնամեակներ, մինչեւ դրեթէ վերջին պատերազմի նախօրեակը, հայութիւնը քաղաքական պահանջներ չառաջադրեց Ռուսաստանում եւ ոչ էլ ձեւակերպեց իր հողային պահանջները Անդրկովկասում: Եւ չէր էլ կարող: Անկախ այն հանգամանքից, որ հայութեան քաղաքական ծրագիրները սահմանի այն կողմն էին սահմանափակուած, հայ տարրը Անդրկովկասում աստիճանաբար միայն աւելացաւ քանակով եւ զօրացաւ որակով, որպէս հետեւանք հայութեան հաւաքման:

Երբ այդտեղ, ընդամէնը մի-երկու տասնամեակ առաջ, պահանջ առաջացաւ գաւառական-վարչական ինքնավարութիւն (զեմստվո) մտցնելու, դրան զուգընթաց տակաւ հասունացաւ ինչպէս Անդրկովկասի միւս ազգերի, այնպէս նաեւ հայերի մէջ, ազգային տերրիտորիայի պահանջը: Այդ ժամանակ արդէն՝ հայութիւնը Անդրկովկասում թուով եւ, մանաւանդ, տնտեսական կարողութեամբ, յետ չէր մնում իր հարեւաններից. ընդհակառակը: Անդրկովկասեան Հայաստանի գաղափարը մեզնից ընդամէնը քսան տարի առաջ նոր-նոր էր զարթնում: Նա մինչեւ իսկ որպէս անուն դեռ եւս գործածութեան մէջ չէր:

Եթէ աւելի հին, տկար փորձերը մի կողմը թողնելու լինինք, յիշատակել պէտք է 1909-ի զեմստվային (գաւառ. ինքնավարութեան) խորհրդակցութիւնը, որ հրաւիրեց փոխարքայ Վորոնցով Դաշկով, մէկ էլ 1916-ի խորհրդակցութիւնը Նիկոլա Նիկոլայեւիչի օրով գումարուած: Մէկը ռուսական առաջին յեղափոխութեան, միւսն էլ պատերազմի եւ յարակից պարագաների հետեւանքով առաջացած, որոշ չափով բաւարարելու համար անդրկովկասեան ժողովուրդների ազգային պահանջները:

Զեմստվային խորհրդակցութիւնները թէեւ անմիջական հետեւանք չտուին առաջադրուած նպատակի տեսակէտից, բայց հայութեան համար ունեցան այն օգուտը, որ մի նոր առիթ եղան՝ ուժեղացնելու համար արդէն իսկ հրահրուել սկսող ազգային տերրիտորիայի գաղափարը Անդրկովկասի սահմաններում:

Հ. Յ. Դաշնակցութեան յամառ վճռականութեամբ՝ ռուս իշխանութիւնների եւ մեր հարեւանների առջեւ ձեւակերպուեց յստակ պահանջը — ճանաչել եւ ընդունել Անդրկովկասի հայութեան տերրիտորիալ իրաւունքը — հայկական հողային միութեան կամ միութեանց (նահանգ, նահանգներ) մէջ առնել հայաբնակ բոլոր գաւառները Երեւանի նահանգից դուրս եւս — Թիֆլիսի նահանգում (Լոռի-Բորչալու, Ախալքալաք) եւ Գանձակի նահանգում (Զանգեզուր, Ղարաբաղ, Լեռնային Գանձակ եւ Ղազախ կամ Դիլիջան:

Ինչ վերաբերում է Կարսի նահանգին, հայութեան պահանջները այն ժամանակ եւ այն պայմաններում, այսինքն զեմստվոյական շրջանակում, սահմանափակւում էին Կարսի եւ